Հովհաննես Տերզնցու տպագրած այս Սաղմոսարանը շատ հազվագյուտ գիրք է, որից չկար Հայաստանի որևէ գրադարանում։ Գ. Լևոնյանը գրում է. «Մենք այս հրատարակությունը (Տերզնցու Սեղմոսարանը.—Շ. Շ.) չենք տեսել, հետևապես չպետք է կարողանանք խոսել նրա պոլիգրաֆիական արժեքի մասին։ Արդյոք Աբգարի թողած տառե՞րն են օգտագործված... թե՞ նոր տառեր են ձուլված, հայտնի չէ»[2]։

Տերզնցու և Աբգար դպրի Սաղմոսարանների տառատեսակների բաղդատությունը մեզ բերեց այն եզրակացության, որ դրանք տպագրվել են բոլորովին տարբեր տառանիշերով։ Առաջինը տպագրված է մանր, փոքրատառ և մեծատառ տպագիր գրերով, իսկ երկրորդը՝ խոշոր, ձեռագիր տառանիշերով։

Այդ բանում մենք համոզվեցինք, երբ Մատենադարանի գրադարանը ունեցավ Տերզնցու Սաղմոսարանից մի օրինակ և տեսա թե ինչպես։



Նկ. 1. Սաղմոսարանի «ժգ» մամուլի 7-րդ էջը

Նկ. 2. Սաղմոսարանի «գ» մամուլի 2-րդ էջը

Արժանահիշատակ ակադեմիկոս Հակոբ Մանանդյանը կտակ էր թողել իր անձնական արխիվը հանձնել Մատենադարանին։ Նրա արխիվի հետ հանձնվեց նաև մի հնատիպ գիրք, որի «բ» մամուլի 4-րդ էջին և «գ» մամուլի 3-րդ էջին դրոշմված է ակադեմիկոս Մանանդյանի անձնական կնիքը։

Գիրքը թերթելով պարզեցինք, որ Սաղմոսարան է, բայց տպագրության թվականը, վայրը, տպագրիչի ով լինելը պարզելու համար պահանջվեց երկար ժամանակ, որովհետև գիրքը թերի էր թե՛ սկզբից և թե՛ վերջից։ Նա սկսվում է «բ» մամուլի 3-րդ էջով, այսինքն 19 էջից և վերջանում է «իբ» մամուլի 4-րդ էջով, չունի տիտղոսաթերթ և վերջին էջերի բացակայության պատճառով չկա

2 Գ. Լևոնյան, Հայ գիրքը և տպագրության արվեստը, Երևան, 1958, էջ 73—74։